ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-134-23.09.2017-ՏՀ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 14-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

1.	Վտանգավոր թափոնների գործածություն	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Իրավական ակտի անհրաժեշտությունը. Սույն նախագծի ընդունման անհրաժեշտությունը կայանում է լիցենզավորման ոլորտում առկա տնտեսական գործունեությունը խաթարող որոշ նորմերի ազատականացման և առավել արդարացի դարձնելու մեջ:

Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 14-րդ կետն իսկզբանե խմբագրվել է այնպես, ինչպես գործող օրենքն է: Այսինքն, Օրենքի սկզբանական բովանդակության իմաստով՝ քննարկվող գործունեությունը դիտարկվել է որպես մեկ ամբողջություն, և դրա ցանկացած բաղադրիչի համար լիցենզիա ձեռք բերելու նպատակով տնտեսվարող սուբյեկտը հարկադրված է եղել ներկայացնելու նաև մյուս բաղադրիչներին վերաբյալ փաստաթղթերը, բավարարել այդ բոլոր բաղադրիչներին վերաբերող պահանջները:

2007 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում (22.02.2007, ՀՕ-116) քննարկվող դրույթը խմբագրվել է հետևյալ կերպ.

1.	վտանգավոր թափոնների՝ -վերամշակում -վնասազերծում -պահպանում -փոխադրում - տեղադրում	ՀՀԿ	Բ	Ա	Փ	-	Փ	Հ	Վ.

Փաստորեն, նշված օրենսդրական փոփոխության արդյունքում գործունեության բաղադրիչները տարանջատվել են, և արդյունքում տնտեսվարող սուբյեկտի համար ստեղծվել են առավել բարենպաստ պայմաններ: Մասնավորապես՝ գործունեության բաղադրիչներից որևէ մեկը նախաձեռնելու դեպքում, գործարարը պարտավորված է եղել ներկայացնել միայն տվյալ բաղադրիչին ներկայացվող պահանջները:

2010 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով (08.12.2010, ՀՕ-227) կրկին անցում կատարվեց սկզբնական խմբագրությանը: Այսպիսով, փոփոխության արդյունքում տնտեսվարող սուբյեկտը կրկին հարկադրված է քննարկվող գործունեության որևէ բաղադրիչով զբաղվելու նպատակով ապահովել նաև մյուս բաղադրիչներին ներկայացվող պահանջները:

Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտը մտադիր է իրականացնելու միայն վտանգավոր թափոնների փոխադրում, վերջինս հարկադրված է լիցենզիա խնդրարկելիս ապահովել նաև վտանգավոր թափոնների վերամշակմանը, վնասազերծմանը, պահպանմանն ու տեղադրմանը ներկայացվող փաստաթղթերը և պահանջները:

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 2 «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 14-րդ կետի 1-ին ենթակետի կիրառության վերաբերյալ պաշտոնական պարզաբանման համաձայն՝ «Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 14-րդ կետի 1-ին ենթակետում նշված գործունեության բոլոր թվարկված տեսակներից յուրաքանչյուրով զբաղվելու համար անհրաժեշտ է լիցենզիայի ստացում, անկախ այն հանգամանքից՝ դրանք միավորված են մեկ միասնական լիցենզիայում, թե ոչ»:

Առկա օրենսդրական կարգավորումը հակասում է Օրենքի տրամաբանությանը: Օրենսդրի կողմից գործունեության առանձին տեսակներով զբաղվելու համար լիցենզիա նախատեսելը, ինչպես նաև դրանց ներկայացվող կոնկրետ պահանջները և փաստաթղթերը ինքնանպատակ չեն, այլ ուղղված են անձանց առողջության պաշտպանությանը, զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը, հսկողության իրականացմանը և այլն: Տվյալ պարագայում միայն, օրինակ, փոխադրման գործունեություն նախաձեռնող տնտեսվարող սուբյեկտի համար լրացուցիչ պարտավորություն նախատեսելը (այն է ապահովել վտանգավոր թափոնների վերամշակմանը, տեղադրմանը, պահպանմանը վերաբերող պահանջներ և փաստաթղթեր) որևէ կերպ չի ընդգրկվում Օրենքի նպատակների և տրամաբանության շրջանակներում: Լիցենզավորող մարմինն օժտված է նախնական հսկողության (իրականացվում է լիցենզիա տրամադրելիս Օրենքի նպատակներից բխող փաստաթղթեր և տեղեկություններ պահանջելու և դրանք ուսումնասիրելու միջոցով) և հետագա վերահսկողության իրավասությամբ (իրականացվում է լիցենզավորված գործունեության նկատմամբ օրենսդրությամբ սահմանված պահանջների և պայմանների պահպանման հետագա ստուգման միջոցով):

Վերը նշված լիազորությունները հնարավորություն են տալիս ապահովելու Օրենքի նպատակի իրագործումը: Այլ կերպ ասած՝ լիազորված մարմինն օժտված է համապատասխան լիազորությամբ, որը հնարավորություն է տալիս վերահսկելու վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման, տեղադրման լիցենզիա ստացած սուբյեկտի կողմից գործունեության նկատմամբ սահմանված համապատասխան պահանջների և պայմանների պահպանումը և միայն համապատասխան բաղադրիչի իրականացումը:

Հետևաբար, նախատեսված լրացուցիչ պարտավորությունը չի կրում հիմնավորված բնույթ:

Գործող կարգավորումը հակասում է նաև Սահմանադրությամբ նախատեսված տնտեսական գործունեության ազատության սկզբունքին. մասնավորապես, Սահմանադրության 11-րդ հոդվածի ուժով՝ *Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը*: Տնտեսական գործունեության ազատության սկզբունքի նախատեսումը նպատակ է հետապնդում հնարավորինս նպաստավոր պայմաններ նախատեսել տնտեսվարող սուբյեկտների համար: Ընդ որում, նշված իրավունքին համապատասխանում է պետության պարտականությունը՝ ապահովելու իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ունակություններն ու գույքը՝ օրենքով չարգելված տնտեսական գործունեություն իրականացնելու համար:

Փաստորեն, այն դեպքում, երբ տնտեսվարող սուբյեկտը մտադրվում է իրականացնելու օրենքով չարգելված կոնկրետ գործունեություն, պետությունը պարտավոր է համապատասխան երաշխիքներ և խթաններ ստեղծել նշված գործունեության իրականացման համար՝ ձեռնպահ մնալով դրան որևէ կերպ խոչընդոտելուց:

Առկա իրավակարգավորման պարագայում ոչ միայն բացակայում են համապատասխան երաշխիքներ, այլ նաև լրացուցիչ խոչընդոտներ ու ավելորդ բեռ է ստեղծվում տնտեսվարող սուբյեկտի համար խնդրո առարկա տնտեսական գործունեություն նախաձեռնելիս. վերջինս պարտավորված է ապահովել որոշակի պահանջներ, որոնք կապված չեն իր կողմից նախաձեռնվող գործունեության հետ, չեն բխում դրանից:

Առկա խնդիրների առաջարկվող լուծումները. Նախագծերի փաթեթով առաջարկվում է խնդրո առարկա դրույթը վերախմբագրել այնպես, որ համապատասխան լիցենզիա (ներդիր) խնդրարկող սուբյեկտը պարտավորված չլինի իր գործունեության հետ չկապված փաստաթղթեր և այլ նախադրյալներ ապահովել՝ հաշվի առնելով նաև, որ «Թափոնների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի սահմանմամբ՝ «*թափոնների գործածություն» նշանակում է գործողություններ, որոնք ուղղված են թափոնների գոյացման կանխարգելմանը, դրանց հավաքմանը, փոխադրմանը, պահմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, հեռացմանը, վնասազերծմանը և թաղմանը*, ինչպես նաև լիցենզիայի սպեկտրի կրճատմանը զուգահեռ՝ նվազեցվում է դրա համար վճարման ենթակա պետական տուրքի գումարը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 43. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը

1. Գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է սույն հոդվածի աղյուսակում:

2. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակ

Հ/հ	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը	Լիցեն-զավորող մարմինը	***(նյութակը հանվել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***	Ոլորտ	Փորձա-քննու-թյան պահանջ	Մրցու-թային կար-գով	Որակա-վորման պահանջ	Հաշվե-տվու-թյան պահանջ	Վայրի պա-հանջ
1	2	3	4	5	6	7	8	9	10
	1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Պայթուցիկ նյութերի և պայթեցման սարքավորումների արտադրություն	ՀՀԿ		-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր և պայթեցման աշխատանքների կատարում	ԿՄ		-		-	Ո	Հ	Վ
3.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								
4.	Զենքի արտադրություն	ՀՀԿ		-	Փ	-	-	Հ	Վ
5.	Զենքի առևտուր	ԿՄ		-	Փ	-	-	Հ	Վ
6.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրություն	ՀՀԿ		-	Փ		Ո	Հ	Վ
7.	Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր	ՀՀԿ		-	Փ	-	Ո	Հ	Վ
8.	Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում	ԿՄ		-	Փ	-	-	Հ	-
9.	Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում	ԿՄ		-	Փ	-	-	Հ	-
10.	Ռազմական նշանակության արտադրանքի	ԿՄ		-	-	-	-	Հ	-

	առևտրի միջնորդական գործունեություն (ռազմական նշանակության արտադրանքի առևտրի գործընթացում այլ անձանց համար պայմանագրերի կնքման բանակցությունների վարման, ինչպես նաև այդ արտադրանքի ձեռքբերման, փոխանցման և վաճառքի օժանդակման ծառայությունների մատուցում)								
11.	Մասնավոր պահնորդական գործունեություն	ԿՄ		-	-	-	Ո	-	-
	2. ԱՌԵՎՏՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում	ԿՄ		Ա	-	-	-	-	-
	3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Դեղերի արտադրություն	ԿՄ			Փ	-	Ո	Հ	Վ
2.	Դեղատնային գործունեություն	ԿՄ		-	-	-	Ո	Հ	Վ
3.	Կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացում	ԿՄ		-	-	-	Ո	-	Վ
4.	Գենետիկ ինժեներիայի գործունեություն	ՀՀԿ		-	Փ	-	Ո	Հ	Վ
5.	*(կետն ուժը կորցրել է 19.06.13 ՀՕ-84-Ն)*								
6.	Դեղերի մեծածախ իրացում	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
	4. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք	ԿԲ		-	-	-	Ո	Հ	Վ
2.	Արտարժույթի առուվաճառք	ԿԲ		-	-	-	Ո	Հ	Վ
3.	Արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպում	ԿԲ		-	-	-	Ո	Հ	Վ
	5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Ներդրումային ծառայությունների մատուցում՝ ըստ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ծառայությունների տեսակների	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
2.	Կարգավորվող շուկայի օպերատորի գործունեություն	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
3.	Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեություն	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-

	6. ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Բանկային գործունեություն	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
2.	Գրավատների կազմակերպում	ԿԲ		-	-	-	-	Հ	Վ
3.	Ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
4.	Կյանքի ապահովագրության իրականացում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասերով և ենթադասերով	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
5.	Ոչ կյանքի ապահովագրության իրականացում՝«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասերով և ենթադասերով	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
6.	Ինկասացիոն ծառայությունների մատուցում	ԿՄ		-	-	-	Ո	-	-
7.	Վարկային բյուրոյի գործունեություն	ԿԲ		-	-	-	-	Հ	-
8.	Ապահովագրական բրոքերային գործունեություն	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
9.	Վարկային կազմակերպության գործունեություն	ԿԲ		-	-	-	Ո	Հ	Վ
10.	Դրամական (փողային) փոխանցումների իրականացում	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
11.	Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացում	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-
12.	Կյանքի վերաապահովագրության իրականացում	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
13.	Ոչ կյանքի վերաապահովագրության իրականացում	ԿԲ		-	Փ	-	Ո	Հ	-
	7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ	***(կետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***							
	8. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Բնական գազի փոխադրում, բաշխում, ներկրում, արտահանում	ՀԾԿՀ		Ա	-	-	-	Հ	Վ
2.	էլեկտրական էներգիայի արտադրություն (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրությունը), հաղորդում, բաշխում, արտահանում, ներկրում	ՀԾԿՀ		Ա	-	-	-	Հ	Վ
3.	Ջերմային էներգիայի արտադրություն, փոխադրում, բաշխում	ՀԾԿՀ		Ա	-	-	-	Հ	Վ
4.	էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի	ՀԾԿՀ		Ա	-	-	-	Հ	Վ

	օպերատորի ծառայություններ								
5.	էներգետիկական շուկային մատուցվող ծառայություններ	ՀԾԿՀ		Ա	-	-	-	Հ	-
	8.1. Ջրային ոլորտ								
1.	խմելու ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում	ՀԾԿՀ		Ա	Փ	-	-	Հ	Վ
	9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Նախադպրոցական կրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
2.	Տարրական հանրակրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
3.	Հիմնական հանրակրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
4.	Միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
5.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
6.	Միջին մասնագիտական կրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
7.	Բակալավրի կրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
8.	Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
	10. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ(ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ) ԲՆԱԳԱՎԱՌ								
1	***(ենթակետն ուժը կորցրել է 29.04.13 ՀՕ-48-Ն)***								
1.1.	Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի	ՀԾԿՀ		Ա	-	-	Ո	Հ	Վ
2.	***(ենթակետն ուժը կորցրել է 29.04.13 ՀՕ-48-Ն)***								
3.	***(ենթակետն ուժը կորցրել է 29.04.13 ՀՕ-48-Ն)***								
4.	Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում	ՀՌԱՀ		-	-	Մ	-	-	Վ
5.	մասնավոր մուլտիպլեքսորի գործունեություն	ՀՌԱՀ		-	Փ	Մ	-	Հ	Վ
	11. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Փոստային կապի գործունեություն	ԿՄ		Ա	-	-	-	-	-
	12. ՄԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Մաքսային և ազատ մաքսային պահեստներում ապրանքների պահպանություն	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
2.	Անմաքս առևտրի խանութներում մաքսային	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ

	հսկողության ներքո ապրանքների իրացում								
3.	Մաքսային փոխադրողի գործունեություն	ԿՄ		Ա	-	-	-	Հ	-
4.	Մաքսային հսկողության տարածքների կազմակերպում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
5.	*(կետն ուժը կորցրել է 25.05.11 ՀՕ-199-Ն)*								
	13. ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Միջուկային տեղակայանքների կամ ռադիոակտիվ թափոնների պահեստարանների կամ ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների հրապարակի ընտրում կամ նախագծում կամ կառուցում կամ շահագործում կամ շահագործումից հանում	ԱԷՕԲԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Միջուկային նյութերի կամ ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի կամ ռադիոակտիվ թափոնների ներմուծում կամ արտահանում	ՀՀԿ		-	-	-	-	Հ	-
3.	Միջուկային նյութերի արտադրություն կամ օգտագործում կամ փոխադրում կամ պահեստավորում	ԱԷՕԲԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
4.	Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ օգտագործում կամ փոխադրում կամ պահեստավորում	ԱԷՕԲԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
5.	Ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի արտադրություն կամ օգտագործում կամ վերանորոգում կամ մոնտաժում և կարգաբերում կամ փոխադրում կամ պահեստավորում	ԱԷՕԲԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
6.	Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում կամ կարգաբերում	ԱԷՕԲԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
7.	Ռադիոակտիվ թափոնների վերամշակում կամ պահում	ԱԷՕԲԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
8.	Միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության իրականացում	ԱԷՕԲԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
9.	Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության տեսակետից կարևոր սարքերի, սարքավորումների, համակարգերի նախագծում կամ պատրաստում	ԱԷՕԲԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
10.	Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծերի և այլ փաստաթղթերի փորձաքննություն	ԱԷՕԲԿՄ		-	-	-	Ո	Հ	Վ

11.	Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց գործունեություն	ԱԷՕԲԿՄ		-	-	-	Ո	Հ	Վ
	14. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Վտանգավոր թափոնների գործածություն~~Վտանգավոր թափոնների վերամշակում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում~~	ԿՄ		-	Փ	-	Ո	Հ	Վ
2.	Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեություն	ԿՄ	Պ	-	-	-	Ո	-	-
	15. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ, ՇԱՀՈՒՄՆԵՐՈՎ ԽԱՂԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Վիճակախաղերի կազմակերպում	ԿՄ		-	-	-	-	Հ	-
2.	Շահումներով խաղերի կազմակերպում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
3.	Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում	ԿՄ						Հ	Վ
4.	Խաղատների կազմակերպում	ԿՄ		-	-	-	-	Հ	Վ
	16. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ								
1.	Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպում	ԿՄ		Ա	Փ	-	Ո	Հ	-
2.	Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն	ԿՄ		-	Փ	-	-	Հ	Վ
3.	*(կետն ուժը կորցրել է 20.11.14 ՀՕ-165-Ն)*								
4.	Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար- տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացում	ԿՄ		-	-	-	-	-	-
5.	Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԿՄ		-	-	-	-	-	-
	17. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների)	ԿՄ		-	-	-	-	-	-
2.	Շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, համապատասխան նպատակի համար նախատեսված	**ԿՄ**		**-**	**-**	**-**	**-**	**-**	**-**

	հողամասի տարածքում ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցվող՝ 300 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների, 150 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունների, 50 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակների, 1000 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցների, 500 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունների և 100 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների)								
3.	Շինարարության որակի տեխնիկական հսկողություն (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների, համապատասխան նպատակի համար նախատեսված հողամասի տարածքում ոչ ձեռնարկատիրական նպատակով սեփականատիրոջ կողմից կառուցվող՝ 300 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տների, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտների, 150 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունների, 50 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակների, 1000 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցների, 500 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունների և 100 քառ. մ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունների)	ԿՄ					Ո	Հ	
4.	Ինժեներական հետազննում	ԿՄ		-	-	-	Ո	-	-

5.	Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն	**ԿՄ**		**-**	**-**	**-**	**Ո**	**Հ**	**-**
	18. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ								
1.	Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ օրենքով նախատեսված փորձաքննությունների իրականացում	ԿՄ		-	Փ	-	-	-	-
2.	***(ենթակետն ուժը կորցրել է 08.12.11 ՀՕ-335-Ն)***								
3.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								
4.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								
5.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								
6.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								
7.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								
8.	Աուդիտորական ծառայությունների իրականացում	ԿՄ		-	-	-	Ո	Հ	-
9.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								
10.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								
11.	***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***								

3. Սույն հոդվածի աղյուսակում չնշված գործունեության տեսակներով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք իրավունք ունեն զբաղվել առանց սահմանափակման, եթե տվյալ գործունեության տեսակով զբաղվելն օրենքով արգելված չէ:

3.1. ***(մասն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***

4. Սույն հոդվածի աղյուսակի երրորդ սյունակում հապավումներով սահմանվում են լիցենզիա տվող մարմինները: Աղյուսակի հապավումները վերծանվում են հետևյալ կերպ՝

ՀՀԿ - Հայաստանի Հանրապետության կառավարություն.

ԿԲ - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

ՀԾԿՀ-Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

ՀՌԱՀ - Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով.

ԿՄ - Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին կամ մարմիններ.

ԱԷՕԲԿՄ՝ Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմին:

(պարբերությունն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)

5. ***(մասն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***

6. Սույն հոդվածի աղյուսակի հինգերորդ սյունակում «Ա» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու համար չի պահանջվում լիցենզիա, եթե դրանք իրականացվում են ոչ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության նպատակով:

7. Միայն սույն հոդվածի աղյուսակի վեցերորդ սյունակում «Փ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու համար օրենքով կամ լիցենզավորման կարգերով կարող է պահանջվել ապրանքների, առարկաների, սարքավորումների, ինչպես նաև լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննական եզրակացություն:

8. Սույն հոդվածի աղյուսակի յոթերորդ սյունակում «Մ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու լիցենզիան տրվում է միայն մրցույթի արդյունքում:

9. Միայն սույն հոդվածի աղյուսակի ութերորդ սյունակում «Ո» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու լիցենզիան տալու համար կարող է իրականացվել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգում:

10. Միայն սույն հոդվածի աղյուսակի իններորդ սյունակում «Հ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձանցից լիցենզավորող մարմիններն իրավունք ունեն պահանջել լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություններ կամ տեղեկություններ:

11. Միայն սույն հոդվածի աղյուսակի տասներորդ սյունակում «Վ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձինք են պարտավոր լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացնել միայն լիցենզիայում նշված վայրում:

12. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների պարզաբանումները տրվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և «Տնտեսական գործունեության ընդհանուր դասակարգիչների» համաձայն:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Լիցենզավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի ՀՀ օրենքների նախագծերի (Պ-134-23.09.2017-ՏՀ-011/1) վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածի աղյուսակում «ՀՀԿ» հապավումը փոխարինել «ԿՄ» հապավմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին հոդվածի աղյուսակով վտանգավոր թափոնների գործածության լիցենզիայի յուրաքանչյուր ներդիրի համար պետական տուրքը սահմանել տարեկան բազային տուրքի 40-ապատիկի չափով:	Ընդունվել է:	Ընդունվել է: